



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ

Հաշվարկություն «Հերիթեյջ» հիմնադրամի կողմից
հրապարակված՝ 2021թ. զեկույցի հիման վրա



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ	1
2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	3
3. ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	5
4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ	9
5. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԴՐՈՒՄՆԵՐ.....	12
6. ԱՄՓՈՓՈՒՄ	17
ՀԱՎԵԼՎԱԾ 1	19
ՀԱՎԵԼՎԱԾ 2	20

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

2020 թվականին կորոնավիրուսային համավարակը ճգնաժամային իրավիճակ է ստեղծել բազում ոլորտներում, այդ թվում՝ պետություն-մասնավոր հատված հարաբերություններում: Խնդրով պայմանավորված, այս ժամանակահատվածում էապես մեծացել է տնտեսական հարաբերություններում պետական միջամտության աստիճանը: Այդուհանդերձ, Հայաստանի Հանրապետությունում 2021 թվականի մարտ ամսվա դրությամբ՝ պետական քաղաքականության ազդեցությունը համավարակի տարածման տեմպերի դանդաղման, ինչպես նաև տնտեսական ակտիվության վերականգնման վրա հիմնականում եղել է ոչ նշանակալի:

Ինչպես գիտենք, տնտեսական ճգնաժամերի և անորոշությունների պայմաններում մասնավոր հատվածը, որպես կանոն, հարկադրված է լինում «օգնություն հայցել» կառավարությունից՝ հաղթահարելու իրացվելիության խնդիրները և խուսափելու անվճարունակությունից: Այս իմաստով բացառություն չէր նաև նոր կորոնավիրուսի հարուցած ճգնաժամը, որի դեպքում պետական միջամտությունը տնտեսական ոլորտում ծավալվել է երկու ուղղություններով՝

- տնտեսական գործունեության սահմանափակումներ՝ համավարակի տարածումը զսպելու նպատակով,
- իրացվելիության ներարկման միջոցառումներ՝ վերոհիշյալ սահմանափակումների սոցիալ-տնտեսական հետևանքները հաղթահարելու նպատակով:

Համավարակը շարունակում է տարածվել մեծ արագությամբ, իսկ կառավարությունները դեռևս իրականացնում են որոշակի հակաճգնաժամային միջոցառումներ: Այդուհանդերձ, այսօր արդեն կարելի է պնդել, որ վերոհիշյալ երկու ուղղությունների դեպքում էլ որոշ երկրներում առկա են եղել էական խնդիրներ՝ կապված արդյունավետության ցածր մակարդակի հետ: Արդյունքում արձանագրվել է նահանջ *տնտեսական ազատության* սկզբունքներից՝ առանց բնակչության կենսամակարդակի և տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական վիճակի բարելավման: Նման զարգացումների ֆոնին շուկայական գործոնները դարձել են երկրորդային՝ առաջացնելով խեղումներ տնտեսական համակարգի տարբեր հատվածներում:

Սկսած 1995 թվականից՝ «Հերիթեյը» միջազգային կազմակերպությունը՝ հրապարակում է ամենամյա զեկույց՝ միտված տնտեսական ազատության մակարդակի գնահատմանը աշխարհի տարբեր երկրներում: 2021 թվականի զեկույցը փաստում է, որ կորոնավիրուսային ճգնաժամին լավագույնս դիմակայել են այն երկրները, որոնց ելակետային բնութագրիչները եղել են առավելագույնս համահունչ տնտեսական ազատության սկզբունքներին: Նշենք, որ այդ սկզբունքների շարքին են դասվում *արդար մրցակցությունը, ազատ արտաքին առևտուրը, տնտեսական գործակալների որոշումների ազատությունը և թափանցիկությունը, օրենքի գերակայությունը* և այլն: Այլ կերպ ասած՝ զեկույցը հերթական անգամ արժանագրում է, որ տնտեսական հարաբերությունների առանցքում պետք է լինի ազատ, մրցակցային շուկան: Ինչ վերաբերում է պետությանը, ապա նրա միակ խնդիրն է՝ տնտեսաիրավական կարգավորումների միջոցով սահմանել «խաղի» արդար կանոններ և հետևել դրանց պահպանմանը:

2021 թվականի զեկույցի հաշվարկներում ընդգրկված է 178 երկիր: Տնտեսական ազատության ինդեքսի գծով առաջատար երկրներն են Սինգապուրը, Նոր Զելանդիան, Ավստրալիան, Շվեյցարիան և Իռլանդիան: Այս 5 երկրներում ինդեքսի արժեքը գերազանցում է 80 միավորը, ինչի շնորհիվ նրանք համարվում են տնտեսապես *ազատ*: Մյուս կողմից, ուսումնասիրված երկրների շուրջ 46%-ը՝ 81 տնտեսություն, բնորոշվել է ինդեքսի 60-ից ցածր արժեքով: Նրանց շարքում 63-ը համարվում են *հիմնականում ոչ ազատ*, իսկ 18-ը՝ *ճնշված*:

Հայաստանի Հանրապետության մասով նշենք, որ 2021 թվականին տնտեսական ազատության ինդեքսը կազմել է 71.9 միավոր, ինչի պարագայում երկիրը ամբողջական ընտրանքում զբաղեցրել է 32-րդ հորիզոնականը և գնահատվել որպես *հիմնականում ազատ*: Հատկանշական է, որ ՀՀ տնտեսական ազատության ինդեքսը 2021 թվականին 2020-ի համեմատ բարելավվել է 1.3 միավորով, իսկ դիրքը միջազգային վարկանիշային աղյուսակում՝ 2 հորիզոնականով:

2021-ի արդյունքներով՝ Հայաստանը Հարավկովկասյան տարածաշրջանում զբաղեցրել է երկրորդ հորիզոնականը՝ զիջելով Վրաստանին և գերազանցելով Ադրբեջանին, Թուրքիային և Իրանին: Միաժամանակ, ԵԱՏՄ տարածքում Հայաստանը առաջինն է՝ ունենալով փոքր առավելություն երկրորդ տեղը զբաղեցնող Ղազախստանի նկատմամբ: Նշենք նաև, որ երրորդ տեղում

¹ Նշենք, որ «Հերիթեյը» ամերիկյան պահպանողական վերլուծական կենտրոն է, որը Ռ. Ռեյգանի նախագահության տարիներին (1981-1989թթ.) ունեցել է ակտիվ դերակատարում ազատական գաղափարների տարածման գործում:

Ղրղզստանն է, չորրորդում՝ Ռուսաստանը, իսկ ԵԱՏՄ հնգյակը եզրափակում է Բելառուսը:

2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական ազատության ինդեքսը դիտարկում է մակրոտնտեսական և ձեռնարկատիրական միջավայրի 4 բնութագրիչներ, որոնք կառավարելի են պետական քաղաքականության շրջանակներում: Այդ բնութագրիչներն են՝


- օրենքի գերակայությունը,
- պետական հատվածի մեծությունը,
- պետական կարգավորման արդյունավետությունը,
- շուկայի բացությունը:

Ինչպես ներկայացված է Գծապատկեր 1-ում, տնտեսական ազատության ինդեքսի 4 հենասյուներից յուրաքանչյուրը բաղկացած է 3-ական բաղադրիչներից, որոնք ստանդարտացման արդյունքում ընդունում են արժեքներ 0-100 միջակայքում: Ինդեքսը հաշվարկվում է իր 12 բաղադրիչների *պարզ* միջին թվաբանականի միջոցով (երբ յուրաքանչյուր բաղադրիչի տրվում է միևնույն կշիռը): Նշենք, որ 12 բաղադրիչները ևս սինթետիկ են և ստացվում են որոշակի վիճակագրական ցուցանիշների ագրեգացման արդյունքում:

Տնտեսական ազատության ինդեքսի ընդունած արժեքների հիման վրա երկրները դասակարգվում են խմբերի հետևյալ տրամաբանությամբ. երկիրը համարվում է *ազատ* ինդեքսի 80-100 արժեքների դեպքում, *հիմնականում ազատ*՝ 70-79.9 դեպքում, *չափավոր ազատ*՝ 60-69.9 դեպքում, *հիմնականում ոչ ազատ*՝ 50-59.9 դեպքում, *ճնշված*՝ 0-49.9 դեպքում:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ 2021 թվականի զեկույցի հաշվարկներում հիմնականում կիրառվել են 2019-ի հուլիսի 1-ից մինչև 2020-ի հունիսի 30-ը ընկած ժամանակահատվածի դրությամբ առկա տվյալները:

Գծապատկեր 1. Տնտեսական ազատության 4 հենասյուները և ինդեքսի հաշվարկման համար կիրառվող 12 բաղադրիչները



3. ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Սեփականության իրավունքի պաշտպանություն: Այս բաղադրիչը ցույց է տալիս, թե տվյալ երկրի իրավական կարգավորումների և օրենսդրական բազայի շրջանակներում որքանով է պաշտպանված մասնավոր սեփականության ձեռքբերումը և տնօրինումը: Այն նաև ներկայացնում է մարդկանց վերաբերմունքը վերոհիշյալ իրավական նորմերի նկատմամբ, այսինքն՝ արդյո՞ք այդ նորմերը ստանում են պատշաճ կիրառություն իրական կյանքում: Բաղադրիչի հաշվարկը հիմնված է հետևյալ ցուցանիշների վրա՝

- նյութական սեփականության պաշտպանվածություն,
- մտավոր սեփականության պաշտպանվածություն,
- ներդրողների պաշտպանվածության աստիճան,
- մասնավոր սեփականության բռնագրավման հավանականություն,
- հողերի կառավարման որակ:

2. Արդարադատության արդյունավետություն: Այս բաղադրիչը միտված է երաշխավորելու, որ քաղաքացիների իրավունքները լինեն պաշտպանված այլոց, այդ թվում՝ տվյալ երկրի կառավարության հակաօրինական գործողություններից: Սա պահանջում է արդար և արդյունավետ դատական համակարգի առկայություն, որի ներքո մարդկանց վարքագծի շեղումը օրենքով սահմանված կանոններից կունենա համապատասխան իրավական հետևանքներ: Բաղադրիչի հաշվարկը հիմնված է հետևյալ ցուցանիշների վրա՝

- դատարանների անկախություն,
- դատական գործընթացի որակ,
- որակյալ դատական վճռի կայացման հավանականություն:

3. Կոռուպցիայի բացակայություն: Կոռուպցիան հակասում է արդյունավետ տնտեսական գործունեության սկզբունքներին, քանի որ որոշումների ընդունման գործընթացում սերմանում է հարկադրանքի տարրեր՝ հանգեցնելով տնտեսական արդյունավետության էական կորուստների: Վտանգավոր է հատկապես համակարգային կոռուպցիան և նրա հետևյալ դրսևորումները՝ կաշառակերություն, հովանավորչություն, պաշտոնական դիրքի չարաշահում, գումարների շորթում և այլն: Կոռուպցիայի պայմաններում նվազում է հասարակության վստահությունը պետական ինստիտուտների նկատմամբ, հետևաբար նաև՝ այդ ինստիտուտների գործունեության արդյունավետությունը: Բաղադրիչի հաշվարկը հիմնված է հետևյալ ցուցանիշների վրա՝

- անօրինական վճարների և կաշառքների առկայություն և ծավալներ,

- կառավարության գործունեության թափանցիկություն,
- կոռուպցիայի բացակայություն,
- կոռուպցիայի ընկալման մակարդակ,
- պետական ծառայությունների թափանցիկություն:

4. Հարկային բեռ: Սա համալիր ցուցանիշ է, որ ամփոփում է ինչպես անձնական և կորպորատիվ եկամուտների սահմանային հարկադրույքները, այնպես էլ հարկերի ընդհանուր ծավալը՝ հաշվարկված ՀՆԱ-ի նկատմամբ: Բաղադրիչի հաշվարկը հիմնված է հետևյալ ցուցանիշների վրա՝

- ֆիզիկական անձանց եկամտային հարկի սահմանային դրույքաչափը,
- կազմակերպությունների շահութահարկի սահմանային դրույքաչափը,
- հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը:

5. Պետական ծախսեր: Այս բաղադրիչը ներառում է ոչ միայն պետական սպառումը, այլև տարբեր ծրագրերի շրջանակներում հատկացվող պետական տրանսֆերտները: Զեկույցի հեղինակները ձեռնպահ են մնում պետական ծախսերի օպտիմալ մեծության հաշվարկից: Խնդիրն այն է, որ այդ օպտիմումը փոփոխվում է երկրից երկիր՝ կախված դիտարկվող տնտեսության աշխարհագրական դիրքից, զարգացման մակարդակից և նույնիսկ մշակութային բնութագրիչներից: Փոխարենը, որպես պետական ծախսերի թիրախային մեծություն ընդունվում է Օ-ական արժեքը, այսինքն՝ շուկաների կատարյալ դոմինանտությունը պետական հատվածի նկատմամբ: Կարելի է, իհարկե, պնդել, որ այս մոտեցումը թերի է և խնդրահարույց, քանի որ թույլ կառավարություններին այս բաղադրիչի մասով կտրվի բարձր միավոր՝ չնայած այն հանգամանքին, որ նրանց դեպքում պետական ծախսերի ցածր մակարդակը պայմանավորված է սահմանափակ ինստիտուցիոնալ կարողություններով: Սակայն ակնհայտ է, որ նման երկրները կստանան ցածր միավոր տնտեսական ազատության ինդեքսի այլ բաղադրիչների, օրինակ՝ սեփականության իրավունքի պաշտպանության, ներդրումների կամ ֆինանսական ազատության մասով: Անհրաժեշտ է նշել նաև, որ ինդեքսի հաշվարկում կիրառվում է պետական ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը՝ ստանդարտացված արժեքով: Ընդ որում, ստանդարտացումը իրականացվում է ոչ գծային բանաձևով՝ այնպես, որ Օ-ին մոտ պետական ծախսերը տուգանվում են փոքր չափով, սակայն երբ պետական ծախսերը գերազանցում են 30%-ի շեմը, տուգանքը բազմապատկվում է քառակուսային արագությամբ:

6. Հարկաբյուջետային կայունություն: Հայտնի է, որ բյուջետային դեֆիցիտի և պետական պարտքի անկառավարելի աճը վտանգի է ենթարկում ամբողջ հարկաբյուջետային հատվածի կայունությունը: Պարտքի միջոցով ֆինանսավորվող պետական ծախսերը կարող են նպաստել բարձր տնտեսական

աճի գեներացմանը միայն այն դեպքերում, երբ այդ միջոցները օգտագործվում են ներդրումների իրականացման և հավելյալ տնտեսական արժեքի ստեղծման համար: Իսկ եթե պարտքի միջոցով ֆինանսավորվում է պետական սպառումը, այսինքն՝ պետական բյուջեի ընթացիկ ծախսերի իրականացումը, ապա տնտեսությունը վաղ թե ուշ կբախվի պարտքի գերբեռնվածության խնդրին: Արդյունքում կխաթարվի մակրոտնտեսական կայունությունը՝ էապես մեծացնելով կառավարության դեֆոլտի հավանականությունը: Բաղադրիչի հաշվարկը հիմնված է հետևյալ ցուցանիշների վրա՝

- բյուջետային դեֆիցիտ/ՀՆԱ հարաբերակցություն (վերջին երեք տարիների միջինը),
- պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցություն:

Ի տարբերություն նախորդ բաղադրիչների՝ հարկաբյուջետային կայունության պարագայում վերոհիշյալ ցուցանիշների ստանդարտացված արժեքներին տրվում են տարբեր կշիռներ՝ համապատասխանաբար 80% և 20%:

7. Գործարարության ազատություն: Այս բաղադրիչը ցույց է տալիս, թե տվյալ երկրի կարգավորումների և ենթակառուցվածքների համակարգը որքանով է սահմանափակում գործարարների ինքնուրույնությունը և որոշումների ազատությունը: Բաղադրիչի հաշվարկը հիմնված է մի շարք ցուցանիշների վրա, որոնք ունեն որոշակի ազդեցություն բիզնեսների հիմնադրման, վարման և լուծարման գործընթացների վրա:

8. Աշխատանքի ազատություն: Այս բաղադրիչը ամփոփում է բոլոր այն կարգավորումները, որոնք առնչվում են տվյալ երկրի աշխատաշուկային, այդ թվում՝ նվազագույն աշխատավարձին, առավելագույն աշխատաժամանակին, աշխատանքից ազատման և աշխատանքի ընդունման հանգամանքներին և այլն: Բաղադրիչի հաշվարկը հիմնված է հետևյալ ցուցանիշների վրա՝

- նվազագույն աշխատավարձի և մեկ աշխատողին բաժին ընկնող հավելյալ արժեքի հարաբերակցություն,
- հավելյալ աշխատողների ներգրավման խոչընդոտներ,
- աշխատաժամանակի ճկունություն,
- անարդյունավետ աշխատողներին աշխատանքից ազատելու հետ կապված սահմանափակումներ,
- ծանուցման՝ օրենքով սահմանված ժամանակահատվածը,
- պարտադիր վճարներ՝ աշխատողի՝ աշխատանքից ազատման դեպքում,
- աշխատուժի մասնակցության գործակից:

9. Դրամավարկային ազատություն: Այս բաղադրիչը գնաճի ցուցանիշը զուգակցում է կառավարության այն գործողությունների հետ, որոնց արդյունքում առաջանում են էական խեղումներ գների վարքագծում: Ազատ շուկաների պայմաններում գների կայունությունը մակրոտնտեսական հավասարակշռության անկյունաքարերից է: Բաղադրիչի հաշվարկը հիմնված է հետևյալ ցուցանիշների վրա՝

- գնաճի տեմպ (վերջին երեք տարիների կշռված միջինը),
- գների արհեստական կարգավորում՝ կառավարության կողմից:

10. Առևտրի ազատություն: Ներկայացվում է մաքսատուրքերի և ոչ մաքսային խոչընդոտների ազդեցությունը ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման ծավալների վրա: Բաղադրիչի հաշվարկը հիմնված է հետևյալ ցուցանիշների վրա՝

- միջին կշռված մաքսատուրք,
- ոչ մաքսային խոչընդոտների որակական գնահատական:

11. Ներդրումների ազատություն: Տնտեսական ազատությունը և շուկաների կատարյալ դոմինանտությունը ենթադրում են ֆինանսական ռեսուրսների անարգել տեղաշարժ ինչպես տվյալ երկրի ներսում, այնպես էլ միջազգային մակարդակում: Սակայն, գործնականում երկրները կիրառում են տարաբնույթ սահմանափակումներ՝ վերահսկելու կապիտալի շարժը և պաշտպանելու ներքին ներդրողներին: Կարգավորումները կարող են վերաբերել արտարժույթի առուվաճառքին, միջբանկային փոխանցումներին և այլն:

12. Ֆինանսական ազատություն: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ պետական բանկերի գոյությունը վնասում է ամբողջ ֆինանսական համակարգի կայունությանը՝ սահմանափակելով վարկային ռեսուրսների հասանելիությունը: Պետության բացակայությունը առևտրային բանկերի մասնակիցների (սեփականատերերի) շարքում, ինչպես նաև կառավարության նվազագույն միջամտությունը և կենտրոնական բանկի անկախությունը, անհրաժեշտ նախադրյալներ են բանկային համակարգի արդյունավետ գործունեության, այն է՝ ֆինանսական միջոցների օպտիմալ տեղաբաշխման և վճարահաշվարկային ծառայությունների անխափան մատուցման համար: Բաղադրիչի հաշվարկը հիմնված է հետևյալ ցուցանիշների վրա՝


- ֆինանսական ծառայությունների պետական կարգավորման աստիճանը,
- պետության մասնակցությունը բանկերի և այլ ֆինանսական ինստիտուտների կապիտալում՝ ուղղակի և անուղղակի տնօրինման եղանակներով,
- կառավարության ազդեցությունը վարկերի տեղաբաշխման վրա,

- կապիտալի շուկայի զարգացման մակարդակը,
- միջազգային մրցակցության առկայությունը:

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ

2021 թվականին տնտեսական ազատության ինդեքսը ՀՀ-ում կազմել է 71.9 միավոր, ինչի պարագայում ՀՀ-ն դիտարկվող 178 երկրների շարքում զբաղեցրել է 32-րդ հորիզոնականը, իսկ տարածաշրջանի (Եվրոպա) կտրվածքով՝ 18-րդ հորիզոնականը: Ինդեքսի մեթոդաբանությունից բխում է, որ ՀՀ տնտեսությունը կարելի է որակել որպես *հիմնականում ազատ*: Նշենք նաև, որ ՀՀ-ն գերազանցում է տնտեսական ազատության ինդեքսի համաշխարհային միջինին (61.6 միավոր)՝ 10.3 միավորով և տարածաշրջանային միջինին (70.1 միավոր)՝ 1.8 միավորով:

Գծապատկեր 2. Տնտեսական ազատության ինդեքսը և նրա 12 բաղադրիչները ՀՀ-ում 2021թ.



Ծանոթագրություն. Գծապատկերի վերին հատվածում փակագծերում ներկայացված է տնտեսական ազատության ինդեքսի կամ նրա համապատասխան բաղադրիչի փոփոխությունը 2021 թվականին 2020-ի համեմատ:

Ինչպես ներկայացված է Գծապատկեր 2-ում, տնտեսական ազատության ինդեքսը 2021 թվականին 2020-ի համեմատ բարելավվել է 1.3 միավորով: Դրական տեղաշարժը պայմանավորված է այն հանգամանքով, որ աճ է գրանցվել ինդեքսի 12 բաղադրիչներից 8-ի վարքագծում: Նվազել են ընդամենը 2 բաղադրիչների՝ «սեփականության իրավունքի պաշտպանության» և «առևտրի ազատության»


ընդունած արժեքները՝ համապատասխանաբար 3.4 և 6.8 միավորով: Հայաստանի դիրքի նահանջը «սեփականության իրավունքի պաշտպանության» բնագավառում արտահայտվել է, օրինակ, «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի² ընդունմամբ: Վերջինս պարունակում է էական դիսկեր մարդու հիմնարար իրավունքների խախտման, ինչպես նաև սեփականության ինստիտուտի աղավաղման առումով: Ինչ վերաբերում է «առևտրի ազատություն» բաղադրիչին, ապա նրա նվազումը մեծապես կապված է միջին կշռված մաքսատուրքի աճի հետ՝ 2.2%-ից 5.6%: Եվս երկու բաղադրիչներ՝ «ներդրումների ազատությունը» և «ֆինանսական ազատությունը», մնացել են անփոփոխ: Հատկանշական է, որ վերջին երկու բաղադրիչները վերաբերում են միևնույն՝ «շուկայի բացություն» հենասյանը:

Ինչպես նախորդ տարի, այս անգամ ևս ամենամեծ աճը գրանցվել է «հարկաբյուջետային կայունություն» բաղադրիչի մասով՝ +15.5 միավոր: Բարելավումը կապված է բյուջետային դեֆիցիտ/ՀՆԱ հարաբերակցության նվազման հետ, որը կազմել է 2.5%՝ նախկին 4.1%-ի դիմաց: Հարկ է նկատել, որ բյուջետային դեֆիցիտի կրճատումը միարժեքորեն գնահատելով դրական՝ զեկույցի փորձագետները հարկաբյուջետային կայունության նպատակը գերադասում են կայուն տնտեսական աճի հնարավորությունից: Սակայն, ՀՀ-ում այսօր բարձր տնտեսական աճի ապահովումը կարևոր է, քանի որ այն միջնաժամկետ հեռանկարում գններացնում է հավելյալ պետական եկամուտներ՝ միաժամանակ բարելավելով կառավարության հարկաբյուջետային դիրքը:

Ուշագրավ է, որ երկրորդ ամենամեծ աճը կրկին «պետական հատվածի մեծություն» հենասյան տիրույթում է: Իսկապես, «հարկային բեռի» բաղադրիչը աճել է 2.2 միավորով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ հաշվետու ժամանակահատվածում եկամտային հարկի սահմանային դրույքաչափը դարձել է 23%՝ նախկին 26%-ի դիմաց, իսկ շահութահարկի սահմանային դրույքաչափը՝ 18%՝ նախկին 20%-ի դիմաց: Անհրաժեշտ է, սակայն, նկատի ունենալ, որ հարկային բարեփոխումների արդյունքներով ամբողջությամբ անտեսվել է պրոգրեսիվության սկզբունքը, ինչը անցանկալի է սոցիալական բևեռացման ներկա միտումների պարագայում: Ուստի, այս դեպքում ևս հարկադրույքների նվազման գնահատումը որպես դրական երևույթ առնվազն վիճահարույց է՝ նկատի ունենալով սոցիալական արդարության հաստատման, ինչպես նաև շուկայի ծախողումների (market failures) վերացման հրամայականը:


² «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունվել է 2020 թվականի ապրիլի 16-ին, ՀՕ-240-Ն:

Գծապատկեր 3. Տնտեսական ազատության ինդեքսի արժեքը և հորիզոնականը ՀՀ-ում 2017-2021թթ.



Գծապատկեր 3-ը մատնանշում է, որ վերջին 5 տարիներին տնտեսական ազատության ինդեքսի զարգացումը ՀՀ-ում անցել է երկու փուլերով: 2017-2019թթ. ինդեքսի արժեքը կայուն նվազել է՝ ուղեկցվելով նաև տարածաշրջանային և միջազգային հորիզոնականների վատթարացմամբ: 2020-2021թթ., սակայն, այս բացասական միտումը հակադարձվել է: Այսպես, ինդեքսը 2020 թվականին նախորդ տարվա համեմատ բարելավվել է 2.9 միավորով, դիրքը աշխարհում՝ 13 հորիզոնականով, իսկ դիրքը տարածաշրջանում՝ 6 հորիզոնականով: Տնտեսական ազատության ինդեքսը շարունակել է բարելավվել նաև 2021 թվականին: Ընդ որում, 2020-ի համեմատ ինդեքսի աճը կազմել է 1.3 միավոր, իսկ միջազգային դիրքի բարելավումը՝ 2 հորիզոնական: Ինչ վերաբերում է ՀՀ տարածաշրջանային դիրքին, ապա այն 2021-ին մնացել է անփոփոխ (2020-ի համեմատ): Արդյունքում 2021 թվականին ՀՀ տնտեսական ազատության ինդեքսը ընդունել է վերջին հինգ տարիների առավելագույն արժեքը, ինչի պարագայում երկիրը ինչպես աշխարհի, այնպես էլ տարածաշրջանի կտրվածքով «հանգրվանել» է վերջին հինգ տարիների ամենաբարձր հորիզոնականներում:

Գծապատկեր 4. Տնտեսական ազատության ինդեքսի դինամիկան ՀՀ-ում 2008-2021թթ.



Ուսումնասիրելով ՀՀ տնտեսական ազատության ինդեքսի փոխադասավորությունը աշխարհի և տարածաշրջանի միջինների նկատմամբ՝ կարելի է կատարել երեք հիմնական հետևություն (Գծապատկեր 4): Առաջին՝ դիտարկվող ժամանակահատվածում ինդեքսը ՀՀ-ում մշտապես գերազանցել է աշխարհի միջինը: Երկրորդ՝ ինդեքսը ՀՀ-ում գերազանցել է նաև Եվրոպական տարածաշրջանի միջինը դիտարկվող ժամանակահատվածի բոլոր տարիներին, բացառությամբ 2018 և 2019 թվականների: Ընդ որում, 2018-ին ինդեքսը ՀՀ-ում գտնվել է նույն մակարդակի վրա, ինչ որ Եվրոպայի միջինը: Իսկ 2019 թվականին Հայաստանի ցուցանիշը զիջել է տարածաշրջանի միջինին՝ 0.9 միավորով: Երրորդ՝ ՀՀ տնտեսությունը գնահատվել է *հիմնականում ազատ* 2017, 2020 և 2021 թվականներին, երբ ինդեքսը գերազանցել է 70 միավորը: Դիտարկվող ժամանակահատվածի մյուս տարիներին ՀՀ տնտեսական ազատության կարգը եղել է առավել ցածր, այն է՝ *չափավոր ազատ*, քանի որ ինդեքսը գտնվել է 60-69.9 միջակայքում:

5. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԴՐՈՒՄՆԵՐ

2021 թվականի դրությամբ՝ Հայաստանը Հարավկովկասյան տարածաշրջանում, ըստ տնտեսական ազատության ինդեքսի, զբաղեցնում է երկրորդ հորիզոնականը (Աղյուսակ 1): Տարածաշրջանի վարկանիշային աղյուսակը մեծ առավելությամբ գլխավորում է Վրաստանը, որի դիրքը մրցունակ է նաև համաշխարհային մակարդակում (12-րդ հորիզոնական): Երրորդը Ադրբեջանն

է, որը 2021-ին 2020-ի համեմատ բարելավել է իր կարգը՝ գնահատվելով որպես *հիմնականում ազատ*՝ նախկին *չափավոր ազատ*-ի փոխարեն: Հայաստանից և Ադրբեջանից 1 կարգ ցածր տնտեսական ազատության մակարդակով է օժտված Թուրքիան, որի հորիզոնականը միջազգային վարկանիշային աղյուսակում 76-րդն է: Հարավկովկասյան տարածաշրջանի հետնապահը Իրանն է, որը դիտարկված 178 երկրների շարքում ցուցաբերել է 11-րդ վատագույն կատարողականը:

**Աղյուսակ 1. Տնտեսական ազատության ինդեքսը
Հարավկովկասյան տարածաշրջանի երկրներում 2020-2021թթ.**

	2020			2021		
	Ինդեքս	Հորիզոնական	Կարգ	Ինդեքս	Հորիզոնական	Կարգ
Վրաստան	77.1	12	հիմնականում ազատ	77.2	12	հիմնականում ազատ
Հայաստան	70.6	34	հիմնականում ազատ	71.9	32	հիմնականում ազատ
Ադրբեջան	69.3	44	չափավոր ազատ	70.1	38	հիմնականում ազատ
Թուրքիա	64.4	71	չափավոր ազատ	64.0	76	չափավոր ազատ
Իրան	49.2	164	ճնշված	47.2	168	ճնշված

ՀՀ դիրքը առավել նպաստավոր է ԵԱՏՄ տարածքի երկրների շարքում: Այստեղ Հայաստանը առաջինն է, սակայն ունի փոքր՝ ընդամենը 0.8 միավորի (2 հորիզոնականի) առավելություն երկրորդ տեղը զբաղեցնող երկրի՝ Ղազախստանի նկատմամբ (Աղյուսակ 2): Նշենք նաև, որ Ղազախստանի տնտեսությունը, ինչպես Հայաստանինը, գնահատվում է որպես *հիմնականում ազատ*: ԵԱՏՄ տարածքի մյուս երեք երկրներում տնտեսական ազատության ինդեքսը ընդունում է էապես ավելի ցածր արժեքներ, ինչի արդյունքում այդ երկրները գնահատվում են որպես *չափավոր ազատ*: Ընդ որում, երրորդ տեղում Ղրղզստանն է, չորրորդում՝ Ռուսաստանը, իսկ ԵԱՏՄ հնգյակը եզրափակում է Բելառուսը:

**Աղյուսակ 2. Տնտեսական ազատության ինդեքսը
ԵԱՏՄ տարածքի երկրներում 2020-2021թթ.**

	2020			2021		
	Ինդեքս	Հորիզոնական	Կարգ	Ինդեքս	Հորիզոնական	Կարգ
Հայաստան	70.6	34	հիմնականում ազատ	71.9	32	հիմնականում ազատ
Ղազախստան	69.6	39	չափավոր ազատ	71.1	34	հիմնականում ազատ
Ղրղզստան	62.9	81	չափավոր ազատ	63.7	78	չափավոր ազատ
Ռուսաստան	61.0	94	չափավոր ազատ	61.5	92	չափավոր ազատ
Բելառուս	61.7	88	չափավոր ազատ	61.0	95	չափավոր ազատ

Աղյուսակ 3-ում ներկայացվում է տնտեսական ազատության ինդեքսի՝ 2021 թվականի տվյալները Եվրոպական տարածաշրջանում ներառված բոլոր երկրների կտրվածքով: Ինչպես և նախորդ տարի, Հայաստանը 18-րդն է դիտարկվող 45 երկրների շարքում, ինչը կարելի է գնահատել որպես միջինից բարձր արդյունք: Եվրոպական տարածաշրջանի ամենից ազատական երկիրը Շվեյցարիան է, որ զբաղեցնում է միջազգային վարկանիշային աղյուսակի 4-րդ հորիզոնականը: Տարածաշրջանի հետնապահը Ուկրաինան է, որը գնահատվում է որպես *հիմնականում ոչ ազատ* տնտեսություն:

**Աղյուսակ 3. Տնտեսական ազատության ինդեքսը
Եվրոպական տարածաշրջանի երկրներում 2021թ.**

Երկիր	Ինդեքս	Հորիզոնական	
		Համաշխարհային	Տարածաշրջանային
Շվեյցարիա	81.9	4	1
Իռլանդիա	81.4	5	2
Մեծ Բրիտանիա	78.4	7	3
Էստոնիա	78.2	8	4
Դանիա	77.8	10	5
Իսլանդիա	77.4	11	6
Վրաստան	77.2	12	7
Լիտվա	76.9	15	8
Նիդերլանդներ	76.8	16	9
Ֆինլանդիա	76.1	17	10
Լյուքսեմբուրգ	76.0	18	11
Շվեդիա	74.7	21	12
Ավստրիա	73.9	25	13
Չեխիա	73.8	27	14
Նորվեգիա	73.4	28	15
Գերմանիա	72.5	29	16
Լատվիա	72.3	30	17
Հայաստան	71.9	32	18
Կիպրոս	71.4	33	19
Բուլղարիա	70.4	35	20
Մալթա	70.2	36	21
Բելգիա	70.1	37	22
Ադրբեջան	70.1	38	23
Իսպանիա	69.9	39	24
Լեհաստան	69.7	41	25
Ռումինիա	69.5	43	26
Մակեդոնիա	68.6	46	27
Սլովենիա	68.3	48	28
Պորտուգալիա	67.5	52	29
Սերբիա	67.2	54	30
Հունգարիա	67.2	55	31
Կոսովո	66.5	58	32
Սլովակիա	66.3	61	33
Ֆրանսիա	65.7	64	34
Ալբանիա	65.2	66	35
Իտալիա	64.9	68	36
Թուրքիա	64.0	76	37
Խորվաթիա	63.6	79	38
Մոնտենեգրո	63.4	80	39
Բոսնիա և Հերցեգովինա	62.9	82	40
Մոլդովա	62.5	85	41
Ռուսաստան	61.5	92	42
Բելառուս	61.0	95	43
Հունաստան	60.9	96	44
Ուկրաինա	56.2	127	45

Անհրաժեշտ է նշել նաև, որ 2021 թվականի դրությամբ՝ համաշխարհային տնտեսության՝ տնտեսական ազատության ինդեքսի գծով առաջատար հինգ երկրներն են՝ Սինգապուրը, Նոր Զելանդիան, Ավստրալիան, Շվեյցարիան և Իռլանդիան: Միայն այս երկրների դեպքում է ինդեքսն ընդունում 80-ից բարձր միավորներ: Հետևաբար, ինդեքսի մեթոդաբանության շրջանակներում որպես *ազատ* կարելի է գնահատել միայն այս երկրներին:

Միջազգային վարկանիշային աղյուսակի հակառակ «բևեռում» այսպես կոչված *ճնշված* տնտեսություններն են, որոնց շարքին են դասվում 18 երկրներ: Այս երկրների պարագայում, ինչպես նշվել է մեթոդաբանությունում, տնտեսական ազատության ինդեքսը ցածր է 50 միավորից: Նշենք, որ ամենաթույլ կատարողականը ցուցաբերել են Հյուսիսային Կորեան, Վենեսուելան, Կուբան, Սուդանը և Զիմբաբվեն:

Աղյուսակ 4. Տնտեսական ազատության ինդեքսի տարածաշրջանային միջին արժեքները և Հայաստանի գնահատականը 2017-2021թթ.³

Տարածաշրջան	2017	2018	2019	2020	2021
Եվրոպա	67.9	68.7	68.6	69.8	70.1
Միջին Արևելք և Հյուսիսային Աֆրիկա	61.9	61.5	61.3	61.8	62.6
Ասիա և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջան	60.4	61.0	60.5	61.1	60.2
Ամերիկա	60.0	60.1	59.6	60.0	59.5
Ենթասահարա	55.0	54.4	54.2	55.1	55.7
Աշխարհ	60.9	61.1	60.8	61.6	61.6
Հայաստան	70.3	68.7	67.7	70.6	71.9

Աղյուսակ 4-ը ներկայացնում է տնտեսական ազատության ինդեքսը՝ ըստ զեկույցում դիտարկված տարածաշրջանների: Ինչպես տեսնում ենք, տարածաշրջանների փոխդասավորությունը մնացել է անփոփոխ 2017-2021թթ.: Առաջատարը Եվրոպան է, որին հաջորդում են Միջին Արևելքը և Հյուսիսային Աֆրիկան, այնուհետև՝ Ասիան և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանը, Ամերիկան, Ենթասահարան: Ինչպես արդեն նշվել է, Հայաստանը գերազանցել է Եվրոպայի միջինը դիտարկվող ժամանակահատվածի բոլոր տարիներին, բացառությամբ 2018 և 2019 թվականների: Իսկ մյուս տարածաշրջանների միջինը Հայաստանի կողմից գերազանցվել է մշտապես, այդ թվում՝ 2018 և 2019թթ.:

³ Նկատենք, որ նախորդ տարիների զեկույցների համեմատ վերանայվել է Միջին Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի տարածաշրջանի 2019թ. ցուցանիշը (61.3՝ նախկին 62.4-ի դիմաց), ինչպես նաև Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի 2017 և 2019թթ. ցուցանիշները (60.4՝ նախկին 60.3-ի դիմաց, 60.5՝ նախկին 60.6-ի դիմաց):

6. ԱՄՓՈՓՈՒՄ

Տնտեսական համակարգի բնութագրերը պայմանավորված են բազմապիսի գործոններով, որոնց շարքում ոչ երկրորդային նշանակություն ունեն քաղաքականություն մշակողների նախընտրությունները: Մասնավորապես, կախված նրանից, թե քաղաքականություն մշակողները ինչպես են պատկերացնում պետության և մասնավոր հատվածի հարաբերակցությունը և գործակցությունը, տնտեսական զարգացումները կարող են ստանալ տարբեր ընթացք՝ լինել չափազանց դինամիկ և իմպուլսիվ կամ հակառակը՝ «դանդաղկոտ» և պասիվ:

Ելնելով այն կանխավարկածից, որ բնակչության բարեկեցությունը հակադարձ համեմատական է պետական հատվածի՝ շուկայական գործընթացներին միջամտելու աստիճանին՝ «Հերիթեյջ» կազմակերպությունը, սկսած 1995 թվականից, հրապարակում է զեկույց՝ նվիրված տնտեսական ազատության ինդեքսի հաշվարկմանը: Ինդեքսի չորս հենասյուներն են՝ *օրենքի գերակայությունը, պետական հատվածի մեծությունը, պետական կարգավորումների արդյունավետությունը և շուկայի բացությունը*:

2021 թվականի համար իրականացված հաշվարկները ցույց են տալիս, որ տնտեսական ազատության ինդեքսը ՀՀ-ում կազմել է 71.9 միավոր, ինչի պարագայում ՀՀ-ն դիտարկվող 178 երկրների շարքում զբաղեցրել է 32-րդ հորիզոնականը՝ գնահատվելով որպես *հիմնականում ազատ*: Տնտեսական ազատության ինդեքսը 2021 թվականին 2020-ի համեմատ բարելավվել է 1.3 միավորով, իսկ դիրքը միջազգային վարկանիշային աղյուսակում՝ 2 հորիզոնականով: Դրական տեղաշարժը պայմանավորված է այն հանգամանքով, որ աճ է գրանցվել ինդեքսի 12 բաղադրիչներից 8-ի վարքագծում:

Ընդ որում, ինչպես նախորդ տարի, այս անգամ ևս ամենամեծ աճը գրանցվել է «հարկաբյուջետային կայունություն» բաղադրիչի մասով՝ +15.5 միավոր: Բարելավումը կապված է բյուջետային դեֆիցիտ/ՀՆԱ հարաբերակցության նվազմամբ: Սակայն բյուջետային դեֆիցիտի կրճատումը չպետք է միարժեքորեն գնահատվի դրական, քանի որ այն այլ հավասար պայմաններում հակազդում է տնտեսական աճին: Մյուս կողմից՝ բարձր տնտեսական աճը չափազանց կարևոր է, քանի որ այն միջնաժամկետ հեռանկարում գեներացնում է հավելյալ պետական եկամուտներ՝ միաժամանակ բարելավելով կառավարության հարկաբյուջետային դիրքը:

Ուշագրավ է, որ երկրորդ ամենամեծ աճը կրկին «պետական հատվածի մեծություն» հենասյան տիրույթում է: Իսկապես, «հարկային բեռի» բաղադրիչը

աճել է 2.2 միավորով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ հաշվետու ժամանակահատվածում նվազել են ինչպես եկամտային հարկի, այնպես էլ շահութահարկի սահմանային դրույքաչափերը: Հարկադրույքների նվազման գնահատումը որպես դրական երևույթ նույնպես վիճահարույց է, քանի որ հարկային բարեփոխումների արդյունքներով ամբողջությամբ անտեսվել են պրոգրեսիվության և, ընդհանրապես, սոցիալական արդարության սկզբունքները:

2021 թվականի դրությամբ՝ Հայաստանը Հարավկովկասյան տարածաշրջանում, ըստ տնտեսական ազատության ինդեքսի, զբաղեցնում է երկրորդ հորիզոնականը: Տարածաշրջանի վարկանիշային աղյուսակը մեծ առավելությամբ գլխավորում է Վրաստանը: Երրորդը Ադրբեջանն է, որը 2021-ին 2020-ի համեմատ բարելավել է իր կարգը՝ գնահատվելով որպես *հիմնականում ազատ*՝ նախկին *չափավոր ազատ*-ի փոխարեն: Չորրորդ տեղում Թուրքիան է, իսկ Հարավկովկասյան տարածաշրջանի հնգյակը եզրափակում է Իրանը, որը դիտարկված 178 երկրների շարքում ցուցաբերել է 11-րդ վատագույն կատարողականը:

ԵԱՏՄ տարածքում Հայաստանը առաջինն է՝ ունենալով փոքր՝ ընդամենը 0.8 միավորի առավելություն երկրորդ տեղը զբաղեցնող Ղազախստանի նկատմամբ: ԵԱՏՄ տարածքի մյուս երեք երկրներում տնտեսական ազատության ինդեքսը ընդունում է էապես ավելի ցածր արժեքներ: Ընդ որում, երրորդ տեղում Ղրղզստանն է, չորրորդում՝ Ռուսաստանը, իսկ ԵԱՏՄ հնգյակը եզրափակում է Բելառուսը:

Նշենք նաև, որ 2021 թվականի դրությամբ՝ համաշխարհային տնտեսության՝ տնտեսական ազատության ինդեքսի գծով առաջատար հինգ երկրներն են՝ Սինգապուրը, Նոր Զելանդիան, Ավստրալիան, Շվեյցարիան և Իռլանդիան: Մյուս կողմից՝ ամենաթույլ կատարողականը ցուցաբերել են Հյուսիսային Կորեան, Վենեսուելան, Կուբան, Սուդանը և Զիմբաբվեն:

Ամփոփելով հարկ է արձանագրել, որ երկրների, այդ թվում՝ Հայաստանի, տնտեսական վերելքի հնարավորությունները սերտորեն շաղկապված են հետևյալ խնդիրների հետ. արդյո՞ք քաղաքականություն մշակողներին կհաջողվի գտնել պետության և շուկաների միջև օպտիմալ հարաբերակցությունը, և եթե այո, ապա ինչպիսի՞ մեխանիզմներ են անհրաժեշտ այդ հարաբերակցությունը գործնականում կյանքի կոչելու համար: Մեկ բան ակնհայտ է՝ ցանկացած պարագայում տնտեսական հարաբերությունները պետք է համապատասխանեն մրցակցային շուկաների տառին և ոգուն, քանի որ միայն տնտեսական ազատությունը կարող է գեներացնել խթաններ նորարարությունների համար, խրախուսել արդյունավետությունը և «պատժել» անխոհեմ վարքագիծը:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Տնտեսական ազատության ինդեքսը ՀՀ-ում և մի շարք այլ երկրներում 2010-2021թթ.

Երկիր	Տնտեսական ազատության ինդեքս											
	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Էստոնիա	74.7	75.2	73.2	75.3	75.9	76.8	77.2	79.1	78.8	76.6	77.7	78.2
Վրաստան	70.4	70.4	69.4	72.2	72.6	73.0	72.6	76.0	76.2	75.9	77.1	77.2
Լիտվա	70.3	71.3	71.5	72.1	73.0	74.7	75.2	75.8	75.3	74.2	76.7	76.9
Նիդերլանդներ	75.0	74.7	73.3	73.5	74.2	73.7	74.6	75.8	76.2	76.8	77.0	76.8
ԱՄՆ	78.0	77.8	76.3	76.0	75.5	76.2	75.4	75.1	75.7	76.8	76.6	74.8
Շվեդիա	72.4	71.9	71.7	72.9	73.1	72.7	72.0	74.9	76.3	75.2	74.9	74.7
Չեխիա	69.8	70.4	69.9	70.9	72.2	72.5	73.2	73.3	74.2	73.7	74.8	73.8
Գերմանիա	71.1	71.8	71.0	72.8	73.4	73.8	74.4	73.8	74.2	73.5	73.5	72.5
Հատվիա	66.2	65.8	65.2	66.5	68.7	69.7	70.4	74.8	73.6	70.4	71.9	72.3
Հայաստան	69.2	69.7	68.8	69.4	68.9	67.1	67.0	70.3	68.7	67.7	70.6	71.9
Ղազախստան	61.0	62.1	63.6	63.0	63.7	63.3	63.6	69.0	69.1	65.4	69.6	71.1
Ադրբեջան	58.8	59.7	58.9	59.7	61.3	61.0	60.2	63.6	64.3	65.4	69.3	70.1
Բելգիա	70.1	70.2	69.0	69.2	69.9	68.8	68.4	67.8	67.5	67.3	68.9	70.1
Սլովակիա	69.7	69.5	67.0	68.7	66.4	67.2	66.6	65.7	65.3	65.0	66.8	66.3
Ֆրանսիա	64.2	64.6	63.2	64.1	63.5	62.5	62.3	63.3	63.9	63.8	66.0	65.7
Թուրքիա	63.8	64.2	62.5	62.9	64.9	63.2	62.1	65.2	65.4	64.6	64.4	64.0
Արգենտինա	61.3	61.1	60.2	59.6	61.1	61.3	59.6	61.1	62.8	62.3	62.9	63.7
Մոլդովա	53.7	55.7	54.4	55.5	57.3	57.5	57.4	58.0	58.4	59.1	62.0	62.5
Ռուսաստան	50.3	50.5	50.5	51.1	51.9	52.1	50.6	57.1	58.2	58.9	61.0	61.5
Բելառուս	48.7	47.9	49.0	48.0	50.1	49.8	48.8	58.6	58.1	57.9	61.7	61.0
Հունաստան	62.7	60.3	55.4	55.4	55.7	54.0	53.2	55.0	57.3	57.7	59.9	60.9
Չինաստան	51.0	52.0	51.2	51.9	52.5	52.7	52.0	57.4	57.8	58.4	59.5	58.4
Ուկրաինա	46.4	45.8	46.1	46.3	49.3	46.9	46.8	48.1	51.9	52.3	54.9	56.2
Տաջիկստան	53.0	53.5	53.4	53.4	52.0	52.7	51.3	58.2	58.3	55.6	52.2	55.2
Իրան	43.4	42.1	42.3	43.2	40.3	41.8	43.5	50.5	50.9	51.1	49.2	47.2

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Տնտեսական ազատության ինդեքսը և նրա բաղադրիչները ՀՀ-ում և մի շարք այլ երկրներում 2021թ.

Երկիր	Տնտեսական ազատության ինդեքս	Սեփականության իրավունքի պաշտպանություն	Արդարադատության արդյունավետություն	Կոռուպցիայի բացակայություն	Հարկային բեռ	Պետական ծախսեր	Հարկաբյուջետային կայունություն	Գործարարության ազատություն	Աշխատանքի ազատություն	Դրամավարկային ազատություն	Առևտրի ազատություն	Ներդրումների ազատություն	Ֆինանսական ազատություն
Էստոնիա	78.2	81.8	80.8	86.4	81.0	54.4	99.6	72.7	57.8	79.7	84.0	90.0	70
Վրաստան	77.2	66.9	59.3	64.6	89.1	76.9	94.9	84.9	76.7	76.7	86.0	80.0	70
Լիտվա	76.9	78.9	68.7	74.5	84.6	66.8	97.2	73.1	74.4	80.1	84.0	70.0	70
Նիդերլանդներ	76.8	88.9	72.8	90.6	51.7	47.7	95.3	80.5	60.1	80.4	84.0	90.0	80
ԱՄՆ	74.8	79.7	72.4	76.8	76.0	62.2	34.9	82.5	87.1	81.1	80.4	85.0	80
Շվեդիա	74.7	86.6	79.1	92.5	43.6	29.5	97.6	83.2	53.9	81.5	84.0	85.0	80
Չեխիա	73.8	76.2	56.8	64.4	79.1	51.4	98.1	68.8	77.1	79.7	84.0	70.0	80
Գերմանիա	72.5	78.8	69.8	81.5	60.4	40.3	92.8	82.4	53.0	77.2	84.0	80.0	70
Լատվիա	72.3	74.7	55.9	47.7	76.7	57.6	96.6	76.5	73.8	79.6	84.0	85.0	60
Հայաստան	71.9	57.3	55.3	45.0	87.1	81.3	84.3	81.9	74.5	76.9	73.8	75.0	70
Ղազախստան	71.1	60.2	62.8	44.6	93.6	86.7	98.3	76.2	86.2	70.0	74.6	50.0	50
Ադրբեջան	70.1	67.9	55.8	46.8	88.1	65.2	99.4	80.5	65.9	73.2	68.0	70.0	60
Բելգիա	70.1	84.0	70.2	81.3	46.5	18.4	78.7	80.1	61.1	82.0	84.0	85.0	70
Սլովակիա	66.3	71.5	44.4	48.8	78.4	47.0	93.4	55.6	52.2	74.8	84.0	75.0	70
Ֆրանսիա	65.7	82.2	69.2	80.1	50.7	6.3	69.0	80.2	44.8	77.3	84.0	75.0	70
Թուրքիա	64.0	61.5	58.6	45.4	73.2	64.5	75.8	68.5	48.8	65.4	76.0	70.0	60
Դրոգստան	63.7	46.0	23.3	33.7	94.8	63.8	90.6	72.6	79.5	77.5	72.8	60.0	50
Մոլդովա	62.5	60.6	29.9	38.7	94.0	71.0	96.5	66.2	39.2	71.5	76.8	55.0	50
Ռուսաստան	61.5	54.4	42.4	41.7	93.0	66.1	99.6	84.1	55.4	67.3	74.0	30.0	30
Բելառուս	61.0	58.6	40.4	39.8	92.9	55.5	96.5	75.9	75.7	70.2	76.0	30.0	20
Հունաստան	60.9	55.5	53.5	53.6	59.9	34.2	80.0	75.8	49.8	80.0	84.0	55.0	50
Չինաստան	58.4	62.2	71.5	46.4	72.6	67.6	54.8	80.2	64.9	69.8	71.2	20.0	20
Ուկրաինա	56.2	48.5	41.1	37.9	88.7	48.2	87.7	63.5	48.7	65.8	79.2	35.0	30
Տաջիկստան	55.2	41.6	48.8	35.2	91.9	68.6	75.1	62.3	46.2	68.5	69.6	25.0	30
Իրան	47.2	33.5	28.3	31.8	80.8	90.1	82.8	57.1	50.1	42.1	54.2	5.0	10

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: